«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատի Ֆեդերացիայի
գործադիր տնօրեն՝ Ա. Գևորգյան

«02» դեկտեմբեր 2025թ.

Հայաստանի կանանց 81-րդ առաջնության
առաջին խմբի մրցաշարի

Կանոնադրություն

Անցկացման վայրը՝ ք. Երևան, Հայաստանի շախմատի ակադեմիա (Շևչենկո 34)
Ժամկետները՝ նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 1-ը:

Մասնակիցները՝ մասնակցության իրավունք ունեն.

- 2001 և բարձր ազգային վարկանիշ ունեցող շախմատիստուհիները,
- Հայաստանի կանանց կիսաեզրափակիչ մրցաշարում 1-10-րդ տեղերը գրաված շախմատիստուհիները,
- Հայաստանի մինչև 18, 16, 14 և 12 տարեկան աղջիկների առաջնություններում 1-3-րդ տեղերը գրաված շախմատիստուհիները,
- Հայաստանի մինչև 10 տարեկան աղջիկների առաջնությունում 1-ին տեղը գրաված շախմատիստուհին:

Մրցակարգը՝ շվեյցարական, 9-ը խաղափուլ:
Ժամակարգը՝ 90 րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 30 րոպե ավելացում մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլին 30 վայրկյան ավելացում՝ սկսած առաջին քայլից:

1-3-րդ տեղերը գրաված շախմատիստուհիներն իրավունք կստանան մասնակցելու Հայաստանի կանանց 81-րդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարին:

Լրացուցիչ ցուցանիշներ՝ հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը որոշվում են ըստ.

1. հատված բոխհոլց -1,
2. ամբողջական բուխհոլց,
3. սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի:

Խաղի մեկնարկից 30 րոպեից ավել ուշացած մասնակցին կգրանցվի պարտություն:
Մրցաշարի բացման արարողությունը տեղի կունենա նոյեմբերի 22-ին ժամը 15:00:

Մրցանակներ՝
1-ին տեղ՝ 50000 ՀՀ դրամ
2-րդ տեղ՝ 40000 ՀՀ դրամ
3-րդ տեղ՝ 30000 ՀՀ դրամ
4-րդ տեղ՝ 20000 ՀՀ դրամ
5-րդ տեղ՝ 15000 ՀՀ դրամ

Մրցանակները չեն կիսվելու և հարկվելու են ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն:
Մրցանակակիրները կպարգևատրվեն նաև պատվոգրերով:

Խաղացանկ

22.11.2025	Բացում	15:00
23.11.2025	1-ին խաղափուլ	15:00
24.11.2025	2-րդ խաղափուլ	15:00
25.11.2025	3-րդ խաղափուլ	15:00
26.11.2025	4-րդ խաղափուլ	15:00
27.11.2025	5-րդ խաղափուլ	15:00
28.11.2025	6-րդ խաղափուլ	15:00
29.11.2025	7-րդ խաղափուլ	15:00
30.11.2025	8-րդ խաղափուլ	15:00
01.12.2025	9-րդ խաղափուլ	13:00
01.12.2025	Փակում	18:00

Մասնակիցների, ինչպես նաև նրանց ուղեկցող անձանց և մարզիչի բոլոր ծախսերը գործուղող կազմակերպության հաշվին են:

Բոլոր մասնակիցները պարտադիր պետք է հաստատեն իրենց մասնակցությունը լրացնելով հետևյալ հղումը.

https://forms.gle/zSDCouQc3P13586WA

Գրանցման վերջնաժամկետն է 18.11.2025թ ժամը 18:00-ն:

Հարցերի դեպքում զանգահարել 099 440105